

Ծրագրի անվանումը՝ Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագիր. Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կողմից Բագրատաշենի պետական սահմանի անցման կետի տարածքում Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցում.

Երկիրը՝ Հայաստան, Վրաստան.

Բիզնես հատվածը՝ Տրանսպորտ.

Ծրագիրը՝ ID 43826.

Մրցույթի իրականացման N. 3954871.

Գնման անվանումը՝ Բագրատաշենի պետական սահմանի անցման կետի տարածքում Դեբեդ գետի վրա նոր կամրջի

նախագծման և շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն,

Պատվիրատուի անունը՝ Հայաստանի Հանրապետություն և Վրաստան

Ծանուցման տեսակը՝ Հետաքրքրության հայտի հրավեր

Գնման բնույթը՝ Խորհրդատվական ծառայություն

Փակման ամսաթիվ՝ 15/04/2016 08:00

Պատվիրատուները վերոնշյալ ծրագրի համար համատեղ օգտագործելու են Վերականգնման և Զարգացման Եվրոպական բանկի (ՎՋԵԲ) կողմից տրամադրվող վարկային միջոցները: Գնումների գործընթացը իրականացվելու է ՎՋԵԲ-ի գնումների քաղաքականությանն ու կանոններին համապատասխան:

Ֆինանսավորման մանրամասներ.

1. Ծրագրի իրականացման նպատակով կօգտագործվեն ՎՋԵԲ-ի կողմից տրամադրված վարկը, ինչպես նաև Պատվիրատուների սեփական միջոցները,

2. Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի ֆինանսավորումը կբաշխվի երկու Պատվիրատուների վարկային միջոցների հաշվին:

3. Պատվիրատուն կֆինանսավորի վարկային միջոցների հաշվին իրականացվող գործարքներից առաջացող սնուդղակի հարկերը:

ՎՋԵԲ-ի կողմից տրամադրված վարկային միջոցները չեն կարող օգտագործվել որևէ վճարման կամ ապրանքների ձեռքբերման համար, եթե նման վճարումը կամ ձեռքբերումը արգելվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ, Միավորված ազգերի կանոնադրության VII գլխի և Պատվիրատու երկրների օրենսդրության կամ պաշտոնական կանոնադրության համաձայն:

ՎՋԵԲ-ի կողմից իրականացվող վարկային միջոցները հասանելի կլինեն ցանկացած ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ընկերությունների համար:

Առաջադրանքի հիմնական նպատակն է.

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը (Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈՍԿ) և Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարությունը (Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների ղեկավարամենտ), այսուհետ Պատվիրատու և /կամ Պատվիրատուներ, մտադիր են օգտագործել ՎՋԵԲ-ի կողմից իրականացվող վարկի մի մասը Մադախո-Բագրատաշեն սահմանային անցակետի նոր կամրջի նախագծման և շինարարության իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման պայմանագրի արժեքի համար:

Խորհրդատվական աշխատանքները ներառում են, ի թիվս այլոց, Բնժեների պարտականությունների իրականացումը շինարարական աշխատանքների պայմանագրի համաձայն, որը հիմնվելու է Գործարանների և նախագծման-շինարարության համար FIDIC Պայմանագրի պայմանների հիման վրա (Դեղին գիրք, 1-ին հրատարակություն, 1999 թ.): Պայմանագրի շրջանակներում իրականացվելիք աշխատանքները ներառում են Դեբեդ գետի վրա նոր կամրջի նախագծումն ու կառուցումը, այդ թվում նախագծման և շինարարական հետազոտման բոլոր աշխատանքները, նոր կամրջի շինարարությունը, որը ներառելու է երկու առանձին հարթակ, որոնք կմոտեցնեն Դեբեդ գետի հայկական կողմի առկա սահմանային անցակետի ենթակառուցվածքը, Դեբեդ գետի ջրանցքը և Դեբեդ գետի վրացական կողմի երկաթգիծը: Քանի որ կամրջի շինարարությունը կիրականացվի եռակողմ պայմանագրի շրջանակներում՝ Կապալառու և երկու Պատվիրատուներ , ապա Բնժեների ծառայությունների մատուցման պայմանագիրը նույնպես եռակողմ կլինի: Սույն ծառայությունների հիմնական առանձնահատկությունն է տրամադրել նախագծային և շինարարական աշխատանքների ակտիվ վերահսկողություն՝ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի իրավական ակտերին համապատասխան:

Աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2016թ 4-րդ եռամսյակին: Ընդհանուր ժամանակահատվածը կազմելու է 44 ամիս, ներառյալ շինարարության 18 ամիսները, թերությունների վերացման ժամանակաշրջան 24 ամիս, կատարողական վկայականի տրամադրում՝ 2 ամիս: Սույն խորհրդատուի ընտրությունը կանցկացվի էլեկտրոնային գնումների միջոցով՝ օգտագործելով ՎՋԵԲ-ի էլեկտրոնային գնումների հարթակը (ECEPP):

Հետաքրքրված հայտատուները պետք է գրանցվեն ECEPP-ում՝ այս հղման միջոցով՝ <https://ecepp.ebrd.com/respond/PSA55S8652>:

Կարճ ցուցակում ընդգրկվող խորհրդատվական ընկերությունների կարողությունը և փորձը որոշելու նպատակով ներկայացվող տեղեկատվությունը պետք է ներառի հետևյալը.

- Ընկերության համառոտ նկարագիր, կազմակերպություն և անձնակազմ,
- Նախորդ ոչ ավելի քան 5 տարիների ընթացքում ձեռնարկվող նմանատիպ աշխատանքների փորձի մասին մանրամասն տեղեկատվություն, ներառյալ կատարված աշխատանքների վայրերի մասին.
- Այն անձնակազմի ինքնակենսագրականները, որոնք իրականացնելու են տեխնիկական հսկողությունը:

Վերոնշյալ տեղեկատվությունը չպետք է գերազանցի 25 էջը:

Համաձայն սույն հետաքրքրության հայտի հրավերի՝ Պատվիրատուի կողմից կկազմվի որակավորված ընկերությունների կարճ ցուցակ, որոնք կհրավիրվեն ներկայացնելու առաջարկները:

Այլ տեղեկատվություն

Հետաքրքրության հայտը անգլերեն լեզվով պետք է ներկայացվի ECEPP համակարգի միջոցով, բայց ոչ ուշ քան ECEPP համակարգով սահմանված վերջնաժամկետը:

Հետաքրքրության հայտը չպետք է գերազանցի 25 էջը, առանց ինքնակենսագրականների: Խորհրդատուի համառոտ նկարագիրը, Խորհրդատուն պետք է լինի ընկերություն կամ մի շարք ընկերություններ, որոնք ունեն հիմնավոր վարչական կառավարման փորձ նմանատիպ շինարարական աշխատանքներում, նախագծման գործում իրականացրած վերահսկման աշխատանքներ՝ համադրելի կլիմայական և երկրաբանական պայմաններով:

Նախորդ հինգ տարիների ընթացքում ձեռնարկված նմանատիպ աշխատանքների մանրամասները յուրաքանչյուր ծրագրի համար պետք է ներառեն նվազագույնը հետևյալը՝

- ծրագրի անվանում, վայր, և համառոտ նկարագիր,
- ընկերության պայմանագրային դերը,
- ցանկացած մասնաճյուղի կամ մայր ընկերությունների ներկայությունը և դրանց համապատասխան դերը,
- մեկնարկային և ավարտման ամսաթվերը,
- պայմանագրային արժեքները,
- պատվիրատուի անունը և ֆինանսավորման աղբյուրը,
- իրականացված գործառնություններ և առաջադրանքներ, այդ թվում կիրառելի ազգային և/կամ միջազգային կանոնակարգերը և/կամ ստանդարտները և վկայականները, և եթե դատական գործընթացով կամ այլ պաշտոնական հարցմամբ խորհրդատվական ընկերությունը համարվել է ներգրավված կոռուպցիոն կամ խարդախ գործողություններում, հետաքրքրության հետ միասին պետք է ներկայացվեն նման գործընթացի կամ հարցման արդյունքների մանրամասները:

Պատվիրատուին իրավունք է վերապահում կարճ ցուցակում չընդգրկել այն խորհրդատվական ընկերությունները, որոնք ներգրավված են եղել կոռուպցիոն, խարդախ կամ այլ արգելված գործողություններում, անկախ հետաքրքրության հայտի տեխնիկական գնահատման արդյունքներից:

Հարկ է հաշվի առնել, որ կապալառուի նախագիծը պետք է հիմնված լինի նաև հայկական և վրացական տեխնիկական ստանդարտների և նորմերի վրա, և խորհրդատուն պետք է տիրապետի այն: Եթե ընկերությունը գտնում է, որ չունի աշխատանքների համար անհրաժեշտ փորձառություն, ապա կարող է ստեղծել համատեղ ձեռնարկության գործընկերություն այլ ընկերությունների հետ: Նման դեպքերում հետաքրքրության հայտը պետք է տրամադրի վերոնշյալ մանրամասները յուրաքանչյուր գործընկերոջ համար, նշելով, թե որ ընկերությունն է առաջատար գործընկերը:

Անկնկալվում է, որ խորհրդատուի աշխատանքային խումբը պետք է ներառի առնվազն հետևյալ մասնագետներին, որոնք տիրապետում են տեխնիկական, ինժեներական և շինարարական հմտություններին՝ ունենալով համապատասխան ընդհանուր փորձառություն և առաջարկվող հաստիքների հատուկ փորձառություն:

Հիմնական փորձագետներ

Խմբի ղեկավար /Կամրջի գծով ավագ ինժեներ (15 տարիների ընդհանուր և 10 տարիների հատուկ փորձառություն).

Գլխավոր նախագծող ինժեներ (15 տարիների ընդհանուր և 10 տարիների հատուկ փորձառություն).

Կամրջի ինժեներ /Խմբի ղեկավարի տեղակալ (10 տարիների ընդհանուր և 8 տարիների հատուկ փորձառություն).

Որակի վերահսկման գծով մասնագետ (15 տարիների ընդհանուր և 10 տարիների հատուկ փորձառություն).

Գեոտեխնիկական ինժեներ (15 տարիների ընդհանուր և 10 տարիների հատուկ փորձառություն).

Ոչ հիմնական փորձագետներ

Ինժեներ-Նախահաշվարդ (8 տարիների ընդհանուր և 5 տարիների հատուկ փորձառություն).

Ճանապարհային անվտանգության մասնագետ (8 տարիների ընդհանուր և 5 տարիների հատուկ փորձառություն)

Պայմանագրային մասնագետ (8 տարիների ընդհանուր և 3 տարիների հատուկ փորձառություն)

Մոնիթինգային մասնագետ (7 տարիների ընդհանուր և 3 տարիների հատուկ փորձառություն)

Բնապահպանական մասնագետ (10 տարիների ընդհանուր և 5 տարիների հատուկ փորձառություն)

Հետաքրքրության հայտը պետք է գնահատվի հետևյալ չափանիշներով (ենթաչափանիշ) համապատասխան կշիռներով (%):

Ընկերության համառոտ նկարագիր - 10%, ներառյալ (հիմնական գործունեություն և տարիների փորձ, 5%, տեխնիկական և վարչական ունակություններ - 5%);

Փորձը 90%, ներառյալ (խորհրդատվական բնորոշ աշխատանքների փորձ - 60%, տարածաշրջանին խորհրդատվական բնորոշ աշխատանքների փորձ -30%).

Պատվիրատուի հասցեն

Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի նախարարություն

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Պուշկինի 58

Հեռ. +374 (60) 50 68 70

Գոնտակտային անձ՝ Էռնա Ամիրխանյան – Գնումների և պայմանագրերի կառավարման մասնագետ

Էլեկտրոնային հասցե՝ erna.amirkhanyan@northsouth.am

Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն

Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների ղեկավարամենտ

Հասցե՝ Վրաստան, Թբիլիսի 0160, Ալ. Կազբեգի փ. 12

Հեռ. +995 (322) 37 05 08

Գոնտակտային անձ՝ Լուկա Մոսաշվիլի - Արտասահմանյան ծրագրերի բաժնի ղեկավարի տեղակալ

Էլեկտրոնային հասցե՝ luka.mosashvili@georoad.ge